«Քայլ առ քայլ»

Բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացում

Մեթոդիստ՝ Ն. Հովհաննիսյան

Մանկապարտեզ՝ «Ալափարս գյուղի մսուր մանկապարտեզ » ՀՈԱԿ

Բովանդակություն

Ներածություն……...……..3

Գլուխ 1 ՈՒսումնական գործընթացում երեխաների ինքնուրույնության նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների ձևավորման մանկավարժահոգեբանական հիմունքները……. 5

1.1 Ինքնուրույնության և նախաձեռնողականության բնութագրերը մանկավարժական գրականության մեջ……..…5

1.2 Սաների մեջ ստեղծագործական ունակությունների հայտնաբերման մանկավարժական գործընթացները…….8

1.3 Սաների ստեղծագործական ունակությունների զարգացման մեթոդները.…11

Գլուխ 2 Հետազոտական աշխատանք՝ ուղղված մանկապարտեզի ավագ խմբի սաների ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների բացահայտմանը……13

2.1 Հետազոտության կազմակերպումը և օգտագործված մեթոդներ…….13

2.2 Պարապմունքի պլան……..…15

Եզրակացություն…….…….21

Գրականության ցանկ…….…….22

Ներածություն

«Սովորեցրու ինձ ինքնուրույն սովորել»
Մարիա Մոնտեսորի

Կասկածից վեր է որ նախադասատպրոցական ուսումնական հաստատությունում մեր առաջնային խնդիրն է նպատակաուղղված ներգրավել երեխաներին ինքնուրույն գործելու և ստեղծագործական ունակությունների զարգացմանը:

Տեղեկատվական աղբյուրների բազմազանության այս աշխարհում նույնիսկ նախադպրոցական տարիքի երեխաներին չի բավարարում պասիվ ունկնդրի դերը նրանք սպասում են նյութի հետ ծանոթացման նոր ձևի որտեղ կզարգանա նրանց ակտիվությունը մտածողությունը և նախաձեռնողականությունը:
Այս խնդիրը լուծելու հիանալի միջոցը ճանաչողական առաջադրանքներն են ,խաղերն են ,կերպարվեստային գործունեությունը, որոնք ստեղծում են հետաքրքրություն և դրանք լուծելու ցանկություն:Ժամանակակից աշխարհում մարդն ուղղակի ստեղծագործելու կարիք ունի մտածելու և ոչ ստանդարտ որոշումներ կայացնելու;
Մեր հասարակությանը ժամանակակից զարգացող աշխարհում հարկավոր են կրթված ստեղծագործ ինքնուրույն որոշումներ կայացնող մարդիկ այսօր նախադպրոցական կրթության հիմնական խնդիրը ոչ միայն ըստ կրթական չափորոշիչների կրթություն տալն է որքան զարգացնելը սաների ինքնուրույն մտածողությունը դատողությունը հմտություններն ու կարողությունները տեղեկատվության գնահատումն ու ինքնաիրացումը և ստեղծագործական ունակությունները:
Ստեղծագործական ունակությունների զարգացումը ուղիներից մեկն է որով մենք երեխային կարող ենք մոտիվացնել ուսումնական գործընթացին:

Այսօրվա կյանքը մարդուց պահանջում է արագ կողմնորոշում խնդիրների լուծման ստեղծագործական մոտեցում ;Ստեղծագործ միտք ունեցող մարդու համար, ավելի հեշտ է ստեղծագործ աշխատանք գտնելը:Համաձայն Ն.Ն.Տ.Ս.Վերաքսիայի և Կոմորովայի Մ.Ա.Վասիլևայի երոխան դիդակտիկ խաղերի օգնությամբ ձևավորում է վերաբերմունք իր և ուրիշների նկատմամբ,սովորոում է լինել նախաձեռնող և որոշումներ կայացնող իր մտածողությունն ու երևակայությունը օգտագործող;

Մանկության մեջ որքան հնարավոր է շատ ներդնելով մենք օգնում ենք ապագայում ներդաշնակ անհատականություն ձևավորել: Իմ կարծիքով հենց մանկապարտեզից է սկսվում երեխաների ինքնուրույն գործելու, նախաձեռնող լինելու և ստեղծագործ դառնալու գործընթացը:
Ինքնուրույնությունը ենթադրում է անձի անկախություն, միայն լիակատար անկախության ժամանակ մարդը կարող է դրսևորվել:

Հետազոտական աշխատանքի նպատակն է
Մանկավարժներին գաղափարներ առաջադրել ուսումնական գործընթացում սաների ստեղծագործական ունակությունները վեր հանելու և զարգացնելու նպատակով:

Հետազոտական աշխատանքի նպատակից բխող խնդիրներն են.

ա.սովորեցնել ճիշտ օգտագործել կարողությունները և արտահայտել մտքերը
բ.զարգացնել ստեղծագործական ունակությունները կառավարելու կարողությունները
գ. հավաքել գործնական նյութեր նշված թեմայով և այն համակարգել

դ,գործընկերների ուշադրությունը հրավիրել խնդրի արդիականության վրա

ե,հետազոտական աշխատանքի օբյեկտը ավագ խմբի երեխաներն են
Հետազոտական աշխատանքի արդիականությունը.
Թեման արդիական է որովհետև երեխան իր ամբողջ օրը մանկապարտեզում անցկացնելով բախվում է միջավայրի անընդհատ փոփոխման, որի պատճառով էլ փոխվում է նրան առաջադրվող խնդիրները և նրանց լուծման եղանակները ;Հետևաբար դաստիարակը պետք է օգնի երեխային և սովորեցնի ինքնուրույն աշխատել օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաներ:

Գլուխ 1 ՈՒսումնական գործընթացում երեխաների ինքնուրույնության նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների ձևավորման մանկավարժահոգեբանական հիմունքները

1.1Ինքնուրույնության և նախաձեռնողականության բնութագրերը մանկավարժական գրականության մեջ

Երեխաների ինքնուրույնությունը վերջերս ավելի ու ավելի է դառնում գիտնականների ուսուցիչների և մանկավարժների ուշադրության առարկան սա կապված է ոչ միայն անձին ուղղված գործունեության մոտեցման դաստիարակության ու կրթության այլ նաև հետո մատաղ սերնդին ժամանակակից հասարակության մեջ ընդգրկելու խնդիրների լուծմամբ: Այս մոտեցումը ենթադրում է, որ մանկապարտեզում երեխաները իրենք կարող են որոշել իրենց գործունեությունը վերահսկել դրա ընթացքը, ձևակերպել վարկածներ ,ենթադրություններ անել:Խնդրահարույց իրավիճակների լուծման տարբերակների վերաբերյալ պետք է միջոցներ գտել, հաղթահարել տարաձայնությունները միանալ անհատական և համատեղ գործունեությանը հասնելով դրականի այսպիսի համակարգված և ուղղորդված գործունեությունը երեխայի մոտ չի կարող իրականացվել առանց նրա ինքնուրույնության, որը և ապահովում է երեխայի անհատականություն լինելը:

Երեխայի մեջ ինքնուրույնություն զարգացնելու գաղափարը արդեն դրված էր հին ժամանակներիում Արիստոտելի, Սոկրատեսի, Պլատոնի և այլ փիլիսոփաների կողմից:

Այն ավելի է զարգացել Ջ.Ա. Կումենսկու Դ.Լոքի Մ. Մոնտեսսորիի աշխատություններում ովքեր կարևորել են աշխատանքի մեջ երեխայի ինքնուրույնության ձևավորման հարցը;

Քսաներրորդ դարի մանկավարժների ուշադրությունը ուղղված էր երեխաների մեջ ինքնուրույնության և նախաձեռնողականության խթանման խնդրին: Քսանից երեսունական թվականներին առաջատար ուսուցիչներ Պ.Պ. Բլոնսկին Ս.Պ. Շատակինը ակտիվորեն զարգացին ինքնուրույնության կրթության խնդիրները դպրոցականների շրջանում այն կապելով մեթոդների մշակման հետ: Քառասունականներին Է. Գոլանտը, Ս.Լ. Ռուբինշտեյնը և այլ հետազոտողներ ուսումնասիրեցին ինքնուրույնության որոշ տեսակներ բացահայտեցին դրանց կառուցվածքային տարրերը փորձեցին վերլուծել ձևավորման էությունն ու ընթացքը: Հոգեբաններ ինչպիսիք են Վիգոտսկին, Անանևը ինքնուրույնությունը կապել են երեխայի գործունեության աճի հետ երբ ներքին վերահսկողություն է լինում ինքնակառավարման:

Ինչպես ձեւավորել ինքնուրույնություն երեխայի մեջ:
19-րդ դարի ականավոր մանկավարժ Մարիա Մոնտեսորին ասում է. <<Երեխան կոտրում է , քանի որ ուզում է հասկանալ>> իրականում երեխան փնտրում է, թե արդյոք ներսում մի հետաքրքիր բան կա, քանի որ խաղալիքը նրան բոլորովին հետաքրքիր չէ: Երեխան ձգտում է իրական կյանքով ապրել, իրեն շրջապատող իրերի միջավայրում նա ցանկանում է ինքնուրույն լվացվել, հագնվել, կենդանի էակի մազեր սանրել: Երեխային երջանկացնելու համար շատ քիչ բան է պետք, ինքնուրույնություն,ազատություն անել այնպիսի գործողություններ կյանքում որ հասու են իրեն: Մոնտեսսորին ասում է. տվեք երեխային այնպիսի միջավայր, որը հարմարեցված է նրա մարմնի կառուցվածքին այսպիսի ներդաշնակ միջավայրում երեխան կենտրոնանում է մտավոր աշխարհի վրա, ինչպես պարարտ հողի մեջ գցած սերմը զարգանում է այնտեղ ու աճում միայն մեր միջոցով՝ յուրաքանչյուր առաջադրանքի վրա երկարատեվ և բազմակի աշխատելով:

<<Մի խանգարիր>> երեխան ցանկանում է ինչ-որ ինքնուրույն բան անել՝ ուտել, հագնվել ինչ կպատահեր մեզ հետ, եթե մի հսկա խլեր մեր գդալը ու ստիպեր մեզ կուլ տալ ապուրը սարսափելի արագությամբ առանց ուշադրություն դարձնելու որ մենք խեղդվում ենք: Մարիա Մոնտեսորին իր ուսմունքը կոչում էր <<Գիտական մանկավարժություն>> այն հիմնականում կենտրոնանում է նախադպրոցական մանկավարժության վրա, քանի որ մեծ մանկավարժը գիտեր, որ ամենակարևորը արժեքներն են իսկ դրանք ձևավորվում են շատ վաղ տարիքում:

Մեթոդոլոգիայի հիմքում ազատությունն ու ինքնուրույնությունն է ինչպես նաև հարգանքը երեխայի անհատականության նկատմամբ, Մոնտեսսորի այս միտքը կարելի է համարել նրա ուսմունքի կարգախոսը և արդյունավետ կրթության բանալին <<Սովորեցրու ինձ ինքնուրույն սովորել>>:

Ինքնուրույն մեծացած երեխայի մոտ լավ է զարգացած մտածելու տրամաբանելու լուծումներ գտնելու կարողությունը այդ երեխաներին ազատ են թողել գլուխկոտրուկների ու խնդիրների հետ, այլ ոչ թե հրահանգավորել ու պատրաստի լուծումներ տվել:

Եվ ահա հաշվի առնելով երեխաների ինքնուրույնությունը գիտնականները շեշտում են որ այն արտահայտվում է անհատի իր համար նպատակներ որոշելու ունակությամբ այն է առաջադրանքներ դնել ու միջոցներ և լուծումներ գտնել:

Որոշ հետազոտողներ ինքնուրույնությունը հասկանում են որպես մարդու վարքագիծ և կենսագործունեությամբ կարգավորիչ, սովորաբար դժվար պայմաններում այն կապելով կամքի հետ: Մի շարք հեղինակներ ուսումնասիրում են մարդու ինքնուրույնությունը վարպետության տեսանկյունից դրանք կապելով այս կամ այն գործունեությամբ:

Այսպիսով տարբեր մանկավարժահոգեբանական վերլուծություններ հնարավորություն են տալիս ցույց տալ ինքնուրույնության էական հատկանիշներ.

- ինքնուրույնությունը անհատի բարոյական հատկությունն է (Ա. Մ. Պրիխոժին)
- ինքնուրույնությունը կարևոր կամային հատկանիշ է
- ինքնուրույնությունը անհատականության ինտեգրացիոն որակե միավորելով երկու կողմերը անձնական և գործառնական
- ինքնուրույնությունը անհատականության հատկանիշ է, որ ապահովում է խնդիրների լուծման կոնկրետ մեթոդ ընտրելու և իրականացնելու ունակություն
- ինքնուրույնությունը ակտիվ գործունեության արդյունք է

Նախաձեռնողականությունը առավել ակտիվ ձեւավորվում է նախադպրոցական տարիքում սկսած 3 տարվա ճգնաժամից և <<ես ինքս>> երևույթի առաջացումից:

Ամենաանբարենպաստ շրջանը երեքից հինգ տարեկանն է:Այս տարիքում երեխայի նախաձեռնողականությունը դրսևորվում է տարբեր խաղերի և ֆիզիկական վարժությունների միջոցով: Կարևոր է , որ դաստիարակը համագործակցի երեխաների հետ նախաձեռնողականությունը բնական ձևով դրսևորվում է առարկաների օգնությամ երեխաների փորձերի և բանավոր հետազոտության տեսքով այսինքն չափահասին տրվող հարցերով (ինչու ինչպես որտեղից):

Նախաձեռնողականությունը երեխաների նոր մտքերը առաջ տանելու շարժիչ ուժ է: Նախաձեռնողականությունը կարողությունը իմանալու ինչպես հաղթահարել էմոցիաները խոչընդոտները և դրա հետևանքով առաջացած խնդիրները ցանկացած իրավիճակում:

Մանկապարտեզում շատ կարևոր է հմուտ մանկավարժի աշխատանքը նախաձեռնողականությամբ օժտված երեխաների հետ: Մանկավարժը պետք է խթան հանդիսանա աշակերտի նախաձեռնողականությունը ավելի բարձր մակարդակի հասցնելու գործում:

Երեխաների նախաձեռնողականությունը նպատակաուղղված գործունեություն է, որը նախաձեռնում է ինքը երեխան նպատակ ունենալով փոխել իր դիրքը հասարակության մեջ ,բավարարել իր ցանկությունները իրավունքները լուծել սեփական խնդիրները:

Այն դրսևորվում է երեխայի ազատ գործունեության մեջ: Դաստիարակը պետք է հատուկ դիրքորոշում ունենա աջակցել նախաձեռնող երեխային:

Երեխաների նախաձեռնողականության հինգ ուղղություն կա.

- ստեղծագործական նախաձեռնողականություն
- նախաձեռնողականությունը որպես նպատակադրում և կամային ջանք
- ճանաչողական նախաձեռնողականություն
- հաղորդակցական նախաձեռնողականություն
- շարժողական նախաձեռնողականություն

Ստեղծագործական նախաձեռնողականությունը պատմվածքի վրա հիմնված խաղի մեջ ներգրավելն է որտեղ զարգանում է երեխայի երևակայությունը և երևակայական մտածողությունը:

Որպես նպատակադրում կամ կամային ջանք նախաձեռնողականությունը արտահայտվում է կերպարվեստային գործունեության մեջ:

Ճանաչողական նախաձեռնողականությունը հետաքրքրասիրությունն է փորձերի մեջ, որտեղ զարգացած է պատճառահետևանքային և ընդհանուր հարաբերություններ հաստատելու ունակությունը;

Հաղորդակցական նախաձեռնությունը երեխաների ներգրավվածությունը հասակակիցների հետ շփման մեջ խոսքի հաղորդակցական գործառույթ է:

Շարժողական նախաձեռնողականությունը երեխաների շարժողական տարբեր ձևերի դիտարկումն է:

Այսպիսով նախաձեռնողականություն ունեցող երեխան ունենում են մեծ պատասխանատվություն և շատ կարևոր է երեխայի հետ դիտարկել աշխատանքը ու քննարկել դիտարկել նաև այլընտրանքային տարբերակները:

1.2 Սաների մեջ ստեղծագործական ունակությունների հայտնաբերման մանկավարժական գործընթացները

Գիտնականների հետազոտությունից պարզվել է որ վաղ տարիքում երեխաների ուղեղում նեյրոնների մոտ մեկ միլիոն կապ է հաստատվում և մենք պետք է օգնենք երեխային, որ այդ կապերը որքան հնարավոր է շատ լինեն: Նրա կյանքի առաջին երեք տարիները ունեն զարգացման և ուսուցման ամենամեծ պոտենցիալը յուրաքանչյուր մայրիկ ուզում էր

երեխային տեսնել ճարպիկ, ստեղծագործ, բայց և ինքնուրույն: Սակայն ցավոք բոլորը չէ, որ գիտեն թե ինչպես նպաստել իրենց երեխայի հոգատար զարգացմանը: Ըստ Մասարու Իբուկայի կարևոր և անհրաժեշտ է երեխաների զարգացումը վաղ տարիքում չէ որ առաջին երեք տարիները երեխայի ինտելեկտուալ կարողությունների կազմավորման անկրկնելի շրջան է, երբ ամեն օրը կարող է կարևոր էտապ դառնալ երեխայի բազմակողմանի աճի համար: Ծնված օրից հսկայական է շրջակա միջավայրի ազդեցությունը, այն ինչ մեծերը յուրացնում են մեծ դժվարությամբ երեխաները սովորում են խաղալով:Վաղ տարիքում չխառնվելով, իսկ հետո միայն ճնշում գործադրելով կարելի է միայն կործանել նրա տաղանդը շատ ծնողներ կուզենային իրենց երեխային դաստիարակել,՝ որպես ստեղծագործ անհատականություն:

Ինչ է ստեղծականությունը դժվար է հստակ ասել, բայց պարզ իմաստով երևակայության ազատ թռիչք է, սուր ինտուիցիա ,որը կարող է վերածվել հայտնագործության:Մանկան ֆանտազիան որը իրականությունից հեռու է թվում իրականում ստեղծագործ մտքի սաղմներն են: Օրինակ մեկ երեխայի տալիս ենք մի խաղալիք, ասենք մի կենդանի, նա կարող է նույնականացնել իրեն այդ կենդանու հետ հորինել մի ամբողջ պատմություն կենդանու մասին ,որևէ իրական փորձի կամ հեքիաթի հիման վրա: Մեծահասակը տեսնում է թեյնիկ, իսկ երեխան բաց բերանով ձուկ ՝մեծահասակը կարող է զայրանալ երեխայի վրա <<հիմարություն մի՛ ասա>> սա թեյնիկ է: Այսպիսի պատասխանը սխալ է այն համարժեք է կոկոնի ջախջախման ,որն արդեն պատրաստ է բացվելու Բոլոր երեխաները սիրում են նոր բան սովորել, երևակայել, ստեղծագործել, պատկերացնել, սա երեխաների ստեղծագործական կարողությունների դրսևորման և զարգացման բնական գործընթաց է:

Ստեղծագործական ունակությունները միշտ չէ որ ի հայտ են գալիս ինքնուրույն,իզուր չէ որ նախադպրոցական հաստատություններում սաներն այդքան ակտիվորեն ներգրավված են ստեղծագործական գործունեությամբ տարբեր պարապմունքների ժամանակ:

Կարևոր է օգնել բացահայտել սաների ստեղծագործական շարանը և ստեղծել բարենպաստ պայմաններ այդ կարողությունների զարգացման համար :Մանկության մեջ շատ ներդնելով մենք օգնում ենք ապագայում ներդաշնակ անհատականություն ձևավորել: Որոնք են ստեղծագործական ունակությունները, ինչ են դրանք ներառում, ինչու զարգացնել դրանք:

Նոր բան ստեղծելու գործընթացը, որն արդեն գոյություն ունի կովչում է ստեղծագործականություն: Ի՞նչն է նպաստում սաների ստեղծագործականության զարգացմանը: Խաղերը և վարժությունները ստեղծագործական ունակությունների զարգացման հիմքն է:

Ստեղծագործական ունակությունները ենթադրում են մարդու մտածողություն ունակություն որն ունակ է ոչ ստանդարտ լուծումներ գտնել:

Ստեղծագործական ունակությունները ներառում են.

- ակտիվ երևակայություն
- ճկուն մտածողություն
- ընկալունակ լինելու ունակություն
- զարգացած ինտուիցիա
- նախաձեռնողականություն հետաքրքրասիրություն

Երեխաների ստեղծագործական ներուժի զարգացումը պահանջում է հատուկ պայմանների ստեղծում: Երեխաներին որքան հնարավոր է շուտ մատիտ պետք է տալ, ութ ամսեկանում երեխան արդեն կարող է մատիտը իր ձեռքում պահել ու նրան պետք է տալ թղթեր ոչ ստանդարտ չափերի որպեսզի ենթագիտակցորեն չներարկել այմ իտքը որ բոլոր նկարները պետք է լինեն միայն այդ չափի:

Ծեփելը, թղթից նախշեր կտրելը և թղթիա բազմազան մարմիններ պատրաստելը զարգացնում է երեխայի ստեղծագործական ունակությունները, նախաձեռնողականությունը, կավը, ծեփանյութը, գունավոր թուղթը, այս նյութերը ունեն մեկ ընդհանուր բնութագիր նրանց կարելի է տալ ցանկացած ձև, դրա համար էլ դրանք հանդիսանում են երեխայի վաղ զարգացման համար իդեալական խաղալիքներ նա կարող է այդ նյութով անել ինչ մտքով անցի:

Երբ երեխան ծեփում է վաղ տարիքում զարգանում է նրան ինտելեկտուալ և ստեղծագործական հմտությունները:Ձեռքի ճարպկությունը և ինքնարտահայտումը առաջին բայց ոչ միակ որակներն են որոնք երեխան ձեռք է բերում ծեփելու շնորհիվ:

Դերերով խաղը ևս զարգացնում է երեխաների նախաձեռնողականությունը և ստեղծագործական ունակությունները, նման պարապմունքների գլխավոր նպատակը այնքան երեխային ինչ-որ բան սովորեցնելը չէ, որքան նրա անսահման պոտենցիալը զարգացնելը շարժման, խոսքի միջոցով երեխան ինքնարտահայտվում է խմբի մյուս անդամների հետ հարաբերություններում:

1.3 Սաների ստեղծագործական ունակությունների զարգացման մեթոդները

Սաների ինքնուրույնությունը և ստեղծագործական ունակությունները զարգացնելու համար մանկապարտեզում պարապմունքները անց են կացվում ԽԻԿ համակարգով:

Ինչ է ՏՐԻԶ ստեղծագործական խնդիրների լուծման տեսության

(այսուհետ ՍԽԼՏ) մանկավարժությունը:

ՍԽԼՏ մանկավարժությունը որպես գիտամանկավարժական ուղղություն ձեւավորվել է 80-ականների վերջին Գ.Ս. Ալտ Շուպլլերի կողմից: ՍԽԼՏ մանկավարժությունը նպատակ ունի ձևավորել ուժեղ մտածողություն և կրթել ստեղծագործ անհատականություն որը պատրաստ է լուծելու բարդ խնդիրներ գործունեության տարբեր ոլորտներում:

Այս փորձը վերամշակվել է համապատասխանեցվել մանկավարժության նպատակներին:

ՍԽԼՏ մանկավարժության առաջատար սկզբունքները

ՍԽԼՏ մանկավարժությունը հիմնված է սկզբունքների վրա որոնք թույլ են տալիս հաջողությամբ կազմակերպել ուսումնական գործընթացը.

1. Ընտրության, ազատության սկզբունք. մենք չենք կարող սաների պարտադրել թե ինչպես և ինչ անել: Սանը ավելի պատրաստակամ է անել այն ինչ նախաձեռնել է
2. Բաց լինելու սկզբունքը. երեխային պետք է ցույց տալ մեթոդներ և տեխնիկա բայց նա ինքը պետք է լուծումներ գտնի ու գաղափարներ գեներացնի:
3. Գործողության սկզբունքը. որքան շատ խնդիրներ է լուծում երեխան այնքան ավելի արագ նրա մոտ կձևավորվի նոր բան փնտրելու սովորությունը:
4. Հետադարձ կապի սկզբունքը. դաստիրակը պետք է վերահսկի ուսուցման գործընթացը և պատասխանի երեխայի հարցերին ոչ թե օգնելու այլ առաջ մղելու համար:
5. Զարգացման գործառույթի առաջնահերթության սկզբունքը. երեխան ինքը պետք է բարելավի իր առաջադրանք կատարելը առանց ծնողի կամ դաստիարակի ճնշման:

Ինչու է պետք ՍԽԼՏ մանկավարժությունը ,որ եթե երեխան սովորում է նախադպրոցական ուսումնական հաստատությունում նա բավականաչափ գիտելիք ունի, բայց պատկերացրեք երեխան սովորի հեքիաթ պատմել կամ մաթեմատիկական խնդիրներ լուծել ոչ թե որպես բարդ ինչ-որ մի բան այլ երեխան ճանապարհորդություն կատարի առեղծվածների աշխարհ նա կունենա հարուստ ստեղծագործական հիմք նախաձեռնողականություն, իսկ եթե ոչ միայն մեկ երեխա այլ նրա բոլոր ընկերները հայտնվելն այդ հեքիաթում: Մեծ հեռանկար նոր սերունդ, որի վրա կարող ենք հույս դնել, հենց այդպիսի անհատների զարգացմամբ է զբաղվում ՍԽԼՏ համակարգը: Նա.

- երեխաների մոտ զարգացնում է նկարագրական պատմություններ և հեքիաթներ կազմելու կարողությունը
- ակտիվացնում և բարելավում է մտավոր գործընթացները (հիշողությունը մտածողությունը, ուշադրության, կենտրոնացումը, դիտարկումը վերլուծելու և համեմատելու ունակությունը)
- օգնում է երեխային արագ կողմնորոշվել կյանքի դժվարին իրավիճակներում
- թույլ է տալիս երեխային հորինել զարգացնում է ոչ ստանդարտ մտածողությունը երևակայությունը ֆանտազիան
- ձևավորում է ինքուրույն տրամաբանությունը, խոսքը, տարածական մտածողությունը

ՍԽԼՏ համակարգը ունի տեխնիկայի լայն տեսականի եթե հանրակրթական դպրոցը կամ մանկապարտեզը զարգացնում է կոնկրետ առարկայական գիտելիքներ, ապա այս համակարգը զարգացնում է դրանք ցանկացած իրավիճակում օգտագործելու կարողություն:

ՍԽԼՏ մեթոդով առաջադրանքի օրինակներ

Կան ՍԽԼՏ մեթոդով դիտակտիկ առաջադրանքների ձեռնարկներ:Պարապմունքների ժամանակ դրանք կարելի է օգտագործել կախված ընտրված մեթոդից այնուամենայնիվ ցանկացած առաջադրանքի ընդհանուր նպատակն է զարգացնել երեխայի ստեղծագործական ներուժը ակտիվացնել նրա երևակայությունը, սրամտությունը ճանաչողական գործունեությունը: Օրինակ՝

- Ամանորը ավարտվեց, որտե՞ղ դնել շուկաներում մնացած տոնածառները
- Ինչու՞ անձրևի ժամանակ և լավ է և վատ
- Ձեր առջև 3 բացիկներ են դրված (խնձոր, կով, գետ) դրանց հիման վրա հեքիաթ հորինիր

Գլուխ 2 Հետազոտական աշխատանք՝ ուղղված մանկապարտեզի ավագ խմբի սաների ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների բացահայտմանը

2.1 Հետազոտության կազմակերպումը և օգտագործված մեթոդներ

Ուսումնասիրությունն իրականացվել է Ալափարսի մսուր մանկապարտեզի թվով 27 սաների հետ 15 տղա 12 աղջիկ:Հետազոտության համար ընտրել ենք Հենրիխ Ալտ Շուլլերի ստեղծագործական խնդիրների լուծման տեսության մեթոդիկան: Աշխատանքի նպատակն է սաների ինքնուրույնության նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների աստիճանի գնահատումը սաների ունակությունները բացահայտելու համար անցկացրել եմ ավագ խմբում պարապմունք՛ ինձ շրջապատող աշխարհը առարկայից <<Նյուտոնիկը>> թեմայով ԽԻԿ համակարգով:

https://trizway.com/info/triz-pedagogy.html

2.2 Պարապմունքի պլան

Ինձ շրջապատող աշխարհը

Թեմա-Նյուտոնիկ

Նպատակը- Ձևավորել նյութի գազային պինդ և հեղուկ վիճակների վերաբերյալ գիտելիքներ;

Զարգացնել ուշադրությունը, ստեղծագործական միտքը, նախաձեռնողականությունը; խթանել հարցերի յուրօրինակ պատասխաններ տալու ցանկություն;

Ակնկալվող վերջնարդյունք- Երեխաներին ծանոթացնել գազային հեղուկ պինդ նյութերի հատկություններին , զարգացնել մտածելու կարողությունը;

Կարողունակությունները- Զարգացնել ճանաչողական մոտիվացիոն և տեխնիկական կարողունակությունները

Անհրաժեշտ նյութեր եւ գործիքներ՝ թասով ջուր ,դատարկ շիշ, պիդն նյութեր ,տարբեր ձև ունեցող տարաներ, փուչիկ, ներարկիչ, քարտեր:

Մեթոդական հնարներ ՍԽԼՏ մեթոդի կիրառում (փորձարարական)

Ընթացքը

Խթանման փուլ-դաստիարակը երեխաներին ցույց է տալիս հրաշագործի փայտիկը:Նա օգտագործելով մտագրոհի մեթոդը վեր է հանում թե ում ձեռքին կարող է լինել փայտիկը

Հարց. Ում փայտիկն է սա

Երեխաներ ----------

Հարց . ինչ կարող է անել այս փայտիկը:

Երեխաներ ----------

Եկեք մեր ցանկությունները ասենք ու խոսքը սկսենք ցանկանում բառով:

Երեխաներ ----------

Երեխաներ եկեք փայտիկին ասենք. <<Ցանկանում եմ որ Նյուտոնիկը հայտնվի>>

և նրա հետ փոձեր և հետազոտություններ անենք ;Գալիս է նյուտոնիկը իր հետ բերելով տարբեր պարագաներ;

Իմաստի ընկալման փուլ

Հարց. երեխաներ ինչ կա այս շշի մեջ

Երեխաներ ----------

Եկեք փորձենք շիշը ընկղմել ջրի մեջ ու տեսնենք դուրս եկող պղպջակները, դրանք օդի գազիկներն են

Եկեք փորձենք օդը բռնել, հետո ջուրը ափով բռնել այնուհետև շաքարը

լինեն քննարկումներ…

Տեսաք երեխաներ օդը չբռնվեց, ջուրը ևս չկարողացանք բռնել;Փորձը կատարեն երեխաները;

Նյուտոնիկը մեծ առաջարկում է հետևյալ փորձ անեք մոդելավորենք օդը ջուրը և շաքարը Հարց.ինչ ձև կունենա օդը եթե լցնենք տուփի մեջ եկեք փուչիկ պչենք օդով լցնենք ու բաց թողենք տուփի մեջ

լինեն քննարկումներ…

Իսկ եթե ջուրը լցնենք գլանաձև տարայի մեջ ինչ ձև կստանա ջուրը

Երեխաներ ----------

իսկ շաքարը եթե լցնենք բաժակի մեջ ձևը կփոխի

Երեխաներ ----------

Ֆիզկուլտդադր

Խաղանք <<դառնանք գազային հեղուկ ու դպին նյութեր>> պինդ նյութ հասելով երեխաները կանգնում են հեղուկ ասելով ցատկում են իսկ գազային ասելով վազում են:

Իսկ հիմա եկեք հետազոտենք գազային հեղուկ և պինդ նյութերի սեղմումը

Փորձ սեղմել ներարկիչի միջի օդ ջուրը շաքարը.Փորձը կատարեն երեխաները:

Լինեն քննարկումներ----------

Երեխաներ հիմա եկեք տեսնենք կփոխեն արդյոք այս նյութերը իրենց ծավալը

Փչել փուչիկը ու բաց թողել օդի մեջ

Հարց. ինչ եղան գազիկները

Երեխաներ ----------

Ջուրը մեծ բաժակից լցնել տափակ բաժակի մեջ

Հարց. Փոխեց արդյոք իր ծավալը ջուրը, քչացավ

Երեխաներ ----------

 Փորձենք պինդ նյութը մի տեղից փոխել մյուսի մեջ

Հարց փոփեց արդյոք իր ծավալը շաքարը

Լինեն քննարկումներ----------

Պինդ նյութը չի փոխում իր ծավալը

Կշռադատման փուլ- եկեք երեխաներ աղյուսակի միջոցով ամրապնդեք մեր ստացած գիտելիքները համաձայն ես նյուտոնիկ



Մենք ծանոթացանք գազային նյութի հետ տեսանք որ գազիկները չնայած շատ չարաճճի են չենթարկվող անընդհատ վազում են.բայց կարող են փոխել իրենց ձևը, ծավալը և կարող են սեղմվել:Ջուրը փոխում էիր ձևը բայց չի դեղմվում ծավալը չի փոխում:Իսկ պինդ նյութերը ոչ փոխում են իրենց ձևը ,ոչ սեղմվում են ,ոչ էլ փոխում ծավալը:

Աշխատանք արվեստի կենտրոնում երեխաները ծեփանյութով թափոններով իրենց ստեղծագործական երևակայությամբ մեկանգամյա օգտագործման բաժակներից պատրաստեցին փոքրիկ ծաղկամաններ և պինդ նյութերով (քար, հուլունք, փայտակտորներ) ձևավորեցին:

Դիտարկում

Պարապմունքի միջոցով մեթոդիստը փորձել էր վեր հանել սաների ինքնուրույնության նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների դերը նախադպրոցական տարիքում:Որպես պարապմունքի անցկացման մոդել ընտրել էր ստեղծագործական խնդիրների լուծման տեսության մեթոդը:

Իր առջև դրված խնդիրները իրականացնելու նպատակով մեթոդիստը տարբեր փորձերի ու նյութերի հետազոտությունների միջոցով ծանոթացնում էր սաներին նյութի տեսակներին զարգացնում էր նրանց ուշադրությունը ստեղծագործական միտքը երևակայությունը: Շատ կարևոր էր մեթոդիստի կողմից նոր բան սովորեցնելու նկատմամբ դրական վերաբերմունքի ստեղծումը քաջալերումը խրախուսումը:Մեթոդիստի նպատակն էր զարգացնել սաների ճանաչողական մոտիվացիոն և տեխնիկական կարողականությունները:

Արվեստի անկյունում մեթոդիստի դրված առաջադրանքները հստակ էին ; Պարապմունքը դիտարկում էին մանկապարտեզի տնօրենն ու դաստիարակները ;Վերլուծության ժամանակ եկան այն եզրակացության որ փորձերի մեթոդը արդյունավետ էր սաներին սովորեցնելու նոր նյութը; Մեթոդիստի կողմից հետազոտական աշխատանքը շատ կարևոր էր նախադպրոցական կրթության մեջ. քանի որ այս օրեցօր փոխվող աշխարհում անհրաժեշտ է ինքնուրույնության և ստեղծագործական մտքի զարգացում:

Ալափարսի մսուր մանկապարտեզի տնօրեն՝ Մ. Աթալյան

Մեթոդիստը հասավ իր առջև դրված նպատակին. քանի որ պարապմունքի ընթացքում սաները սովորեցին տարբերել նյութի գազային հեղուկ և պինդ վիճակները փորձերի միջոցով: Ընդլայնվեցին երեխաների պատկերացումները նրանց ծավալի, ձևի փոփոխության վերաբերյալ: Երեխաները ուշադիր լսում էին առաջադրված հարցերը և տալիս խելացի պատասխաններ:Նրանք հասկացան ,որ իրենց շրջապատող նյութերը կարող են լինել տարբեր վիճակներում: Երեխաները ամբողջությամբ ներգրավված էին փորձերի կատարման ընթացքի մեջ ակտիվորեն չափում էին ջրի ծավալի փոփոխությունը սեղմում էին ներարկիչով օդը, պինդ նյութերը:Երեխաները կարծես մեկ այլ աշխարհում գտնվեին ,ցուցաբերում էին մեծ հետաքրքրություն, երջանյկ էյն իրենց կատարած փորձերի արդյունքը տեսնելով:Իսկ արվեստի կենտրոնում մեթոդիստը առաջարկելով տարատեսակ նյութերով պատրաստել ծաղկման զարգացրեց երեխաների ստեղծագործական միտքը

նախաձեռնողականությունը: Սաների ստեղծագործական մտքի զարգացումը շատ կարևոր է այս անընդհատ տեխնոլոգիապես զարգացող աշխարհում:

Դաստիարակ՝ Ք.Հարությունյան

Մեթոդիստը հասավ իր առջև դրված նպատակին: Սաները ընկալում էին իրենց ուղղված խոսքը, կատարում էին առաջադրանքները, կարողանում էին հստակ կապակցված խոսքով արտահայտել մտքերը: Սաները ցուցաբերում էին նախաձեռնողականություն, նկատվում էր նրանց ստեղծագործական մտածողությունը, ինքնուրույնությունը:

Պարապմունքի պլանը կազմված էր հիմք ընդունելով՝ նախադպրոցական պետական կրթական չափորոշիչի, ըստ ԽԻԿ համակարգի և ստեղծագործական խնդիրների տեսության մոդելի:

Մեթոդիստը պարապմունքից առաջ գեղեցիկ կահավորել էր խմբասենյակը դիդակտիկ և ուսումնական նյութերով, ստեղծել էր փորձարարական անկյուն և արվեստի անկյուն: Հետաքրքիր և ուրախալի էր Նյուտոնիկի առկայությունը, որի շնորհիվ երեխաների ուշադրությունը միանգամից կենտրոնացավ: Սաները պատասխանում էին հարցերին, ուշադրությամբ հետևում էին փորձերին, ակտիվ մասնակցում էին, քննարկում, եզրահանգումներ անում, ձգտում էին անձամբ մասնակցել աշխատանքին, անհատական փորձով համոզվել դրանց իրավացիության մեջ: Փորձերը ներարկիչով և տարբեր ձև ունեցող տարրաներով, օգնեցին սաներին նյութի յուրաքանչյուր վիճակի և դրա առանձնահատկության մասին հիմնարար գիտելիք ստանալ, վերջում դա ամփոփվեց աղյուսակի միջոցով՝ նյութի յուրաքանչյուր վիճակ նմանեցնելով մարդուկի ֆիգուրայի(վազող մարդուկ-գազային, ցատկող մարդուկ-հեղուկ, կանգնած մարդուկ-պինդ), այնուհետև + և - միջոցով նշել առանձնահատկության առկայությունը կամ բացակայությունը: Սաներին շատ դուր եկավ ֆիզկուլտ դադարը, որի շնորհիվ նրանք լիցքաթափվեցին:

Ինտեգրված պարպմունքը կազմակերպված և անցկացված էր բավական հետաքրքիր և հագեցված դիդակտիկ նյութերով՝ ժամանակակից պահանջներին համապատասխան: Պարապմունքի երկրորդ մասում սաները պլաստմասե բաժակների և տարբեր պինդ մարմինների օգնությամբ՝ քարեր, հուլունքներ, խխունջներ, և խմորի օգնությամբ պատրաստեցին ծաղկամաններ: Սաները շատ ոգևորվել էին այլընտրանքային պարապմունքին մասնակցելով, ցուցաբերում էին նախաձեռնողականություն: Մեթոդիստը կարողացավ մատչելի ձևով մատուցել նյութը, նրանց տալով սեփական անձի կարևորության և անփոխարինելիության զգացում, սեփական ստեղծագործական ունակությունների հանդեպ վստահություն:

Թեման բավականին արդիական է և հետաքրքիր, քանի որ, զարգացնում է երեխաների պատկերային ընկալումները: Սաները դեռ նախադպրոցական տարիքից սկսում են պատկերացում կազմել, որ շրջապատող տարրերը փոխկապակցված են իրար հետ, օրգանիզմի յուրաքանչյուր տեսակի գոյությունը սահմանափակվում է էկոլոգիական գործոնների ազդեցությամբ:

Դաստիարակ՝ Բ□ □□□□□□□□□

Պարապմունքները դիտարկում էին մանկապարտեզի տնօրենն ու դաստիարակը: Վերլուծության ժամանակ եկան այն եզրակացության որ փորձերի մեթոդը արդյունավետ էր սաներին սովորեցնելու նոր նյութը եւ զարգացնելու ստեղծագործական ունակությունները:

Եզրակացություն

Այսպիսով ինքնուրունությունը, նախաձեռնողականությունն և ստեղծագործական ունակությունները հատկանիշներ են, որոնք պետք է անընդհատ զարգացնել մանկապարտեզի սաների մոտ:Մենք նպատակ ենք դրել տեսականորեն հիմնավորել և գործնական աշխատանքով ցույց տալ թե ինչպոս կարելի է զարգացնել երեխաների ստեղծագործական միտքը և ձևավորել ինքնուրույնություն նախաձեռնողականություն մանկավարժական աջակցությամբ Սաների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար՝ ցածր խմբից մինչև ավագ խումբ: Դաստիարակի համար առաջնահերթ խնդիր է ներդաշնակ զարգացած անհատականության ձևավորումը: Մանկավարժը գիտակցում է, որ ինքնուրույնությունը երեխայի առաջատար որակներից մեկն է, որն արտահայտվում է որոշակի նպատակ դնելու, դրա իրականացմանը ինքնուրույն հասնելու ունակությամբ, սեփական գործունեության նկատմամբ պատասխանատու վերաբերմունք ցուցաբերելու և ոչ միայն գիտակցաբար, այլև ակտիվորեն գործելու ունակությամբ; Գրականության ուսումնասիրությունը հնարավորություն տվեց հանգել հետևյալ եզրակացության ՝սահմանել ինքնուրույնությունը որպես անհատականության հատկություններից մեկը որն արտահայտվում է մատուցելու ունակությամբ; Ինքնուրույն աշխատանքը նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը՝ որպես անհատ որակ:Այն անհատականության հատկանիշ է ,որը բնութագրվում է երեխաների գիտելիքներով հմտություններով կարողություններով; Ինքնուրույն աշխատանքները զարգացնում սովորողների տրամաբանությունը, ճանաչողությունն ու ակտիվությունը: Այն իրականացնում է վարքի ինքնակառավարում, ինքնաիրացում, անհատականություն, մոտիվացիա, ինքնազարգացում, ինքնավարություն անհատական անհատականության գծերի զարգացում և այլն; Ստեղծագործականությունը երեխայի ներքին ակտիվությունն է, որը կապված է նրա հետաքրքրությունների, բնավորության, մտածողության առանձնահատկությունների հետ: Ստեղծագործականությունը զարգացնում է գեղագիտական ճաշակ, քննադատական, համեմետական, ճանաչողական կարողություններ,պատասխանատվության զգացում: Նախաձեռնողականությունը այն շարժիչ ուժն է, որը ամեն մի նոր միտք առաջ է մղում դեպի իրականություն: Նախաձեռնողականությունը կարողություն է իմանալու ինչպես հաղթահարել էմոցիաները, խոչընդոտները,և դրա հետևանքով առաջացած խնդիրները ցանկացած իրավիճակում:Մանկապարտեզի յուրաքանչյուր պարապմունքի ընթացքում կարևոր է դաստիարակի տրամադրվածությունը նախաձեռնողականությամբ օժտված սաների հանդեպ: Այս բացահայտումների հիման վրա կարելի է նաև եզրակացնել , որ եթե երեխան

օժտված է ինքնուրույնությամբ և ստեղծագործականությամբ, կարելի է ասել որ արդեն նաև նախաձեռնող է :

Այսպիսով արդյունքները թույլ են տալիս եզրակացություն անել հետազոտության արդյունավետության մասին ուսումնասիրության ընթացքում առաջարկվածմանկավարժակա
ն աջակցությամբ և մեթոդներով

Գրականության ցանկ

Մասարու Իբուկա «Երեքից հետո արդեն ուշ է»

Մարիա Մոնտեսսորի « Ինքնադաստիարակությունը և ինքնուսուցումը կրտսեր դպրեցում»

Ջ.Ա.Կոմենսկի « Մեծ դիդակտիկա» 2001

Դ.Բ. Բոգոյավլենսկայա «Ստեղծագործական ունակությունների հոգեբանություն » 2012

Լ.Ս.Վիգոցսկի «Հոգեբանական երևակայությունը և ստեղծագործականությունը մանկության մեջ» 2011

Ե.Ի.Իգնատև«Երեխաների երևակայական գործունեության հոգեբանություն» 2017

Ս.Գ Կովալյով «Անձի հոգեբանուրյուն» 1970